ների վրայ թառել: Շարլոնը, չինծու նախադասութիւնների դորշ շարանը, անկիւնաւոր բառերի աղմուկը, հին երկաթ ծախողների այս խանութում դեռեղուել է եւ ճամբաները դոցել:

Հով է՝ որդնած պտուղները վայր են թափում:

Երեւանի Ռադիո-կայանը հանդիսատ չունի: Մեղմ երաժշտութիւնը արձանագրում է միլիոնաւոր բառեր: Հեռագիրները մորեխի նման թառում են գանկերի տակ, մտնում են կաշուէ ծրարները, ջղայնացած մատերի տակ դողդողում են, ու յանկարծ դուրս են պրծնում, յարձակւում են քաղաքների եւ գիւղերի վրայ, ծալւում, ձեռքէ ձեռք անցնում, մաշւում եւ վերջապէս շունչերը կտրած պառկում են դրասենեակների անկիւնում:

Լենինը մեռել ա, եւ ամէն մարդ ոտքի է կանգնել:

Ականջները սրուել են, սրտերը ուռել, յոյսերը արթնցել:

— Մեռե՛լ ա...

— Դէ հիմա՝ հը՛:

— Հը՞ը՞ը... Աստուա՛ծ տայ:

Ծածուկ օղի են խմում, քթի տակ երգ մրմռում:

* * *

Իսկ այնտեղ, հիւսիսային ձիւների մէջ, Մոսկուան փռել է իր թեւերը:

Կարմիր հրապարակը պտոյտ է դալիս: Կրեմլինը թաղուել է մի անյայտ աստղի տակ: Փողոցները մէկը միւսի դէմ են բախւում: Ձիւնը ինքնաշարժերի տակ սրընթաց սահնակի պէս վազում է: Սուզը գլխարկը թեքել է եւ սեւ ձիի սանձերը պինդ քաշել:

Գնում են, գնում են ամբոխները, գլուխները բաց, վիզերը դուրս հանած, լուռօրէն անյայտ մի ճակատագիր դիմաւորելու համար:

Ձիւնը: Ծփում են կարմիր դրօշակները, սողում է սեւ ամբոխը:

Եկեղեցիների ոսկեզօծ գմբէթների շուրջը մառախուղը պտոյտ է դալիս, մինչ զանգակատունները յամր հնչում են դէպի երկինք: Դէպի բեւեռային սառած այն հայելին, ուր քաղաքը եւ ամբոխը արտացոլւում են, աշտարակի վրայից առած շարժանկարի նման, եւ շղարշների տակ, ծփուն ստուերների վերածւում:

Մահը, եկաթէ կօշիկներով, անցնում է Ռուսաստանի վրայից:

Անցնում է ձիւնապատ դաշտերը եւ ոտքը զարնում է գետին: Նրան պատասխանում են Վոլգան եւ Դնեպրը: Սեբաստոպոլի ափերին Սեւ Ծովը ոռնում է: Գիւղերի տանիքների վրայ հովը յուսահատ բաղուկները վայր է նետում ու պատռած կոկորդով ծիներոյդների կատարին երգում:

Ամէն կողմից՝ Սիբերիայից մինչեւ Կովկաս, Ղրիմից մինչեւ Թուրքեստան,՝ ահաւոր ձայներ, խուլօրէն դղրդում են, մեծաքանակ ձիւները վեր են բարձրանում, լեռների շուրջը վայում են, դաշտերը ծեծում են, մտնում քաղաքների մէջ ու քանդուած տունների անկիւններում կմախքների նման պառկում:

Մահը արագացնում է իր քայլը:

Խելագարուած այս աշխարհի միջից վազում է երերալով, վայր է ընկնում, մատները կոտրտում ու ոտքերը մխրճում ձիւնի մէջ եւ կանգ առնում սարսափած:

* * *

Բարձրագոյն հրամանով, Լենինի յուղարկաւորութիւնը պիտի կատարուի բոլոր քաղաքներում եւ գիւղերում նոյն ժամին:

Ժամը 4½-ին գործարանները՝ Միութեան երկրներում եւ դուրսը՝ պիտի սուլեն նոյն ժամին:

50,000 կարմիր դաղաղներ պիտի անցնեն թնդանօթներով շրջապատուած: Զօրքերը պիտի կրակեն եւ բորոգանները ձայնեն:

* * *

Աբովեան փողոցի վերի կողմից, պարապ դաղաղը երերում է կոմխարների ուսերի վրայ:

Զինուորական նուագախումբը Շօպէնի թոքերն է պատռում:

Թնդանօթներ:

Սայլերի վրայ դարմացած գիւղացիներ են նստել:

Երաժշտական Ստուդիան Մոցարտ է երգում: Գարապ դաղաղը, սեւերով ծածկուած ամբիոնի առջեւն են դնում եւ չորս ժամ ճառ են ասում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան